ԱՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ե. Մ. ՌԱՖԵՅԱՆ

1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ վերովում էր մեր հայրենիքի բախտը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին ֆաշիստական զավթիչների դեմ մղված ազատագրական գոտեմարտում իր տեղը գրավեց նաև հայ ժողովուրդը: Ֆաշիզմի դեմ մղված պայքարում անմաս չմնաց նաև սփյուռքահայությունը: Սփյուռքահայ հայրենասերները, առաջին հերթին կոմունիստները, Արևմտյան Եվրոպայի կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, հիտլերյան ֆաշիզմի դեմ ակտիվ պայքարի մեջ էին ընդգրկվել 1939 թ. սկսված երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից: Այդ պայքարը սփյուռքահայության շրջանում լայն ծավալ ստացավ հատկապես Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից հետո:

Հայրենական մեծ պատերազմի սկզբին, 1941 թ. օգոստոսին Սովետական Հայաստանի մտավորականության ներկայացուցիչները սփյուռքահայությանը դիմեցին «Արտասահմանյան երկրներում ապրող բոլոր հայերին» հատուկ կոչով, որի մեջ ասված էր. «Թանկագին բարեկամներ, այս պահին, երբ մեր երկրի և ամբողջ մարդկության վրա կախվել է ահեղ վտանգ, մենք դիմում ենք համայն աշխարհի հայերին, մենք դիմում ենք բոլոր նրանց, որոնց համար թանկ է հազարամյակների կուլտուրական ժառանգությունը, ում համար սուրբ են ազատության և մարդկության վսեմ գաղափարները, բոլոր նրանց, ովքեր սիրում են իրենց իսկական հայրենիքը...: Կոչ ենք անում համախմբել ձեր բոլոր ուժերը հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն ամբողջ մարդկության խաղաղ ու վտանգավոր թշնամու՝ ֆաշիզմի ոչնչացման»[1]:

Կոչը լայն արձագանք գտավ արտասահմանի հայկական գաղթօջախներում: Նյու-Յորքում այդ առիթով հավաքված ամերիկահայերի միտինգի անունից ԱՄՆ-ում սովետական դեսպանությանը ուղարկված հեռագրում ընդգծվել է. «Մենք՝ ամերիկահայերս, որոնց հայրենի երկիրը պաշտպանում է կարմիր բանակը, զգում ենք, որ պարտավոր ենք օգնելու Սովետական Միությանը նրա մղած պայքարում, մինչև որ ֆաշիզմը ոչնչանա ամբողջ աշխարհում»[2]:

Պատերազմական լարված իրադրության պայմաններում սփյուռքահայության մեջ կատարվեց հասարակական ուժերի լուրջ վերախմբավորում: Դաղութահայության հիմնական զանգվածները համախմբվեցին հակաֆաշիստական-հայրենասիրական ճակատում:

---

1 *Տե՛ս «Սովետական գրականություն», 1941, № 8։*

2 «Правда», 25 августа 1941.

Պատերազմի ընթացքում արտասահմանում ապրող հայերի, նրանց անձնական հասարակական գործիչների, եղբայրական կոմունիստական կուսակցությունների հայկական սեկցիաների, ինչպես նաև Ս. Դ. հնչակյանների ու ռամկավարների ակտիվ ջանքերով ստեղծվեցին դեմոկրատական առաջադիմական կազմակերպություններ, որոնք կանգնեցին հայրենիքի պաշտպանության դիրքերում: Այդպիսի կազմակերպություններից Լիբանանում «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը», որին միացավ նաև մինչ այդ գոյություն ունեցող «Հայաստանի օգնության լիգան», Պաղեստինում՝ «Սովետական Հայաստանի պաշտպան լիգան», ԱՄՆ-ում՝ «Ամերիկայի հայերի ազգային խորհուրդը», որ մեծ ազդեցություն ուներ Նյու-Յորքի, Բոստոնի, Չիկագոյի, Դետրոյտի, Ֆիլադելֆիայի, Հարավային Ամերիկայի մի շարք երկրների հայկական շրջանների վրա: Թավրիզում ստեղծվեց «ՍՍՀՄ բարեկամների միություն», Կիպրոսի Նիկոզիա քաղաքում՝ «Հայաստանի բարեկամների միությունը», Ֆրանսիայում՝ «Հայերի ազգային ճակատը»: Ավելի ուշ հայ ազգային ճակատի կազմակերպություններ ստեղծվեցին նաև Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում և այլուր: Վերոհիշյալ կազմակերպությունների շուրջը համախմբվեցին հայրենակցական, բարեգործական, երիտասարդական, մարզական միությունները, եկեղեցական կազմակերպությունները, որոնք իրենց տրամադրության տակ ունեին մամուլի օրգաններ, ակումբներ և այլն:

Սփյուռքահայ հայրենասերները Սովետական Միության հաղթանակի մեջ Լիբանանում վերածնված հայ ժողովրդի, Սովետական Հայաստանի հարատևման երաշխիքը, տարագիր հայության ապագան: Մեկնաբանելով սփյուռքի առաջադիմական ուժերի հայրենասիրական շարժումը, «Պրավդան» 1941 թ. օգոստոսի 25-ի խմբագրականում նշում էր, որ ֆաշիստական Գերմանիայի «Սովետական Միության վրա ավազակային, ուխտադրուժ հարձակում գործելու լուրն ստիպեց զգայուն ու արքուն կենալ հայ ժողովրդի նաև այն զավակներին, որոնք ապրում են ՍՍՀՄ-ի սահմաններից դուրս: Նրանց ամբողջ սերը, նրանց ամբողջ համակրանքը Սովետական Միության կողմն է»[3]:

1943 թ. փետրվարին սովետական զորքերի մեծ հաղթանակը Ստալինգրադի ճակատամարտում, որը շրջադարձային փուլ հանդիսացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ, հակահիտլերյան ուժերի նոր ոգեշարժեր առաջ բերեց: Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները, հանդես գալով «Հայրենիքի հետ, նրա թշնամիների դեմ» լոզունգով, սկսեցին սերտորեն համագործակցել իրենց հյուրընկալած ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին՝ ընդդեմ ֆաշիզմի:

Դաշնակցության պարագլուխները ամեն միջոցով ձգտում էին իրենց ձեռքը վերցնել սփյուռքահայության ղեկավարությունը, որպեսզի նրան կրտրեին հայրենանպաստ գործունեությունից, պառակտեին առաջադիմական ուժերը, բուլացնեին ժողովուրդների հակաֆաշիստական պայքարը: Բայց նրանց այդ չհաջողվեց, ավելին, շարքային դաշնակների մի զգալի մասը հեռացավ այդ կուսակցությունից՝ տեսնելով, որ նրա ղեկավարները վաճառվել են ֆաշիստական վանդալներին: Մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը 1943 թ.

3 Նույն տեղում:

հունվարին հանդես եկավ ռադիոյով ու մամուլի էջերում և մերկացրեց դաշնակցության պարագլուխներին, կոչ անելով սիյուռքի հայությանը՝ հայ ժողովրդի համար այդ տագնապալի օրերին համախմբվել հայրենիքի պաշտպանության սրբազան դրոշի ներքո. «Թող ամեն մարդ իմանա,— ասում էր նա,— որ կան գողունի շնամիներ, որոնք սպասում են Սովետական Միության պարտությանը, որպեսզի հայ ազգը մի անգամ ընդմիշտ ջնջեն երկրի երեսից: ... Թող ամեն մարդ իմանա, որ Հիտլերի անկումը անխուսափելի է և որոշ. Այս հավատով և համոզմունքով է, որ մեր ժողովուրդը կկռվի ինչպես կարմիր բանակի դրոշի տակ, ներշնչված մեր արդար դատով...»[4]:

1943—1944 թթ. ընթացքում սիյուռքի հայրենանվեր կարևոր ձեռնարկումներից մեկը եղավ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար միջոցների հանգանակությունը: Կազմակերպվեցին միջոցներ հանգանակող կոմիտեներ ու հանձնախմբեր: Լիբանանում լույս տեսնող հայկական թերթերից մեկը այդ առթիվ գրեց. «... Մայր հայրենիքը կոչ կրնե իր բոլոր զավակներուն՝ հավաքելու համար իր բարոյական դրոշի տակ, հավատական ճիգով պաշտպանելու համար մեր հավատական հայրենիքը՝ խորհրդային Հայաստանը... Դասալքությունը հայկական առաքինություն մը չէ ու չի կրնար բլլալ: Ապացույցը... հայ մարտիկներու ներկայությունն է կրակի առաջին գիծերուն վրա. Ապացույցը՝ մեր հայրենիքի միահամուռ ճիգն է, գիշեր ու ցերեկ ծրագող անոր գործարաններն ու գերազանցությամբ պարգևատրված մեր թիկունքի աշխատավորներն են... Ուրեմն երբ այսօր մեզ կանչողը Հայաստանն է... նորեն տանք, մեր առավելագույնը տանք մեր հայրենիքին»[5]:

Ոչ լրիվ տվյալներով մինչև 1944 թ. մարտ ամիսը ԱՄՆ-ի հայերը «Սասունցի Դավիթ» շարասյան ֆոնդին մուծել էին 115 հազար դոլար (բացի այդ նրանք կարմիր բանակի ֆոնդին էին մուծել նաև 173 հազար դոլար): Բանից ստացվել էր 2367450 ռիալ. Կիպրոսից՝ 3100, Հոլանդիայից՝ 200 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ. Սիրիայից՝ 275831, Լիբանանից՝ 120 հազար անգլիական ոսկի, Իրաքից՝ 1500 հազար դինար, Եթովպիայից՝ 1300 անգլիական ոսկի, Եգիպտոսից՝ 14248 անգլիական ֆունտ ստեռլինգ և այլն[6]:

Ամերիկահայ ազգային խորհուրդը (որի ղեկավարներից էին Պ. Թերզյանը, Մ. Մարանցը, Օ. Սարյանը, Պ. Սելյանը և ուրիշներ) ամեն տարի հանդիսավորությամբ տոնում էր Սովետական Հայաստանի տարեդարձը, կազմակերպում նվիրատվություններ: Այդ հասույթներով նրանք Հայաստան ուղարկեցին դեղորայք, տաք հագուստեղեն, ՍՍՀՄ ազատագրված շրջանների համար 25 հազար ծառից՝ 75 հազար դոլարի արժողությամբ: Նրանք հաջողությամբ իրականացրեցին Հայաստանի համար մեկ նավ հագուստեղենի հավաքման գործը և այլն: Ազգային խորհրդի վարչության կոչով ամերիկահայությունը ակտիվորեն մասնակցեց նաև ԱՄՆ-ի բանակին և Կարմիր խաչին նյութական օժանդակություն ցույց տալու ձեռնարկումներին:

Ցցուցակար շատ միջոցառումներ իրականացվեցին Արգենտինայի, Ուրուգվայի, Մեքսիկայի ու Միջին Արևելքի հայկական գաղթօջախներում: Ակտիվ գործունեություն ծավալվեց տեղի հայ և օտար բնակչությանը Սովետական

---

4 Ա. վ. Իսահակյան, Արկածախնդիրները, Նյու-Յորք, 1943, էջ 12։

5 Տե՛ս «Սովետական Հայաստան», 17 դեկտեմբերի, 1944։

6 Տե՛ս «Էջմիածին», 1944, № 2—3 և «Սովետական Հայաստան», 1945, № 213 և 250։

Միության, Սովետական Հայաստանի կյանքին ծանոթացնելու, կարմիր բանակի հաղթանակները պրոպագանդելու ուղղությամբ: Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում լայն աշխատանք ծավալեցին ականավոր գործիչներ Մ. Մաղեյանը, «Արև» թերթի խմբագիր Վ. Թեքեյանը և ուրիշներ: Թեհրանի և Թավրիզի Սովետական Հայաստանի բարեկամների բնկերությունների, իրանահայ Ազգային խորհրդի ղեկավարների ջանքերով, առաջադիմական բերքերի աջակցությամբ պայքար կազմակերպվեց ֆաշիզմի և դաշնակցության պրոպագանդայի դեմ, կազմակերպչական մեծ աշխատանք տարվեց կարմիր բանակին և Սովետական Միությանը նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու համար, ՍՍՀՄ ուղարկվեց տաք հագուստեղեն, շոր մրգեր, հանգանակություն կատարվեց գեներալ Բաղրամյանի անվան ռանկային շարասյուն կառուցելու համար և այլն:

Արտասահմանի հայ աշխատավորությունը ֆաշիզմի դեմ պայքար մղեց նաև զինվորագրվելով դաշնակիցների բանակներում: Տասնյակ հազար երիտասարդներ մտան ԱՄՆ-ի, Անգլիայի, դրգոյյան Ֆրանսիայի բանակները, ֆաշիստական զորքերի դեմ կռիվներում հանդես բերելով խիզախության բազմաթիվ օրինակներ: Նրանցից շատերը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Միայն ամերիկյան բանակում թշնամու դեմ մարտնչում էին 18500 հայեր, այդ թվում՝ օդաչուներ, տանկիստներ, ծովայիններ և հետևակայիններ, շարքային մարտիկներից մինչև բարձրաստիճան սպաներ: Մեծ թվով հայ զինվորներ ու սպաներ զորակոչվել էին Եգիպտոսից, Սիրիայից, Իրանից և այլ երկրներից:

Բազմաթիվ հայ մարտիկներ ընդգրկվեցին նաև պարտիզանական դիմադրական պայքարի մեջ, որը լայն ծավալ ստացավ Արևմտյան Եվրոպայում հատկապես կարմիր բանակի հաղթական առաջընթացի ժամանակաշրջանում: Դիմադրության պայքարի խոշոր թատերաբեմ դարձավ Ֆրանսիան, որի ժողովուրդը բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարի դուրս եկավ ֆաշիստական զավթիչների և վիշիական դավաճանների դեմ: Ֆրանսիական ժողովրդի այդ պայքարին մասնակցում էին նաև Ֆրանսիայում ապրող ազգային փոքրամասնությունները՝ իտալացիները, իսպանացիները, հրեաները, հայերը և ուրիշներ:

Ֆրանսահայ հայրենասերների պայքարը ղեկավարում էր Հայ ազգային ճակատը, որի ղեկավարությամբ կազմակերպվեցին պարտիզանական ջոկատներ, ընդհատակյա խմբեր, լույս ընծայվեցին հակաֆաշիստական անլեգալ հայերեն թերթեր ու բրոշիկներ: Դիմադրության շարժման հայ մարտիկները հակաֆաշիստական պայքարում մարտնչեցին հանուն Ֆրանսիայի ազատագրման:

Հայ ազգային հակատը ստեղծվել էր դեռևս 1941 թ. ֆրանսիական ազգային հակատի հետ միասին ընդհատակում. նրա առաջին խմբակները կազմակերպվել էին Մարսելում, Փարիզում, Լիոնում, Գրենոբլում և այլուր: Այդ խմբակները «ազատագրության համար մղվող պայքարը կնույնացնեին մեր հայրենիքի պաշտպանության պայքարին հետ»[7],—գրել է հայ ազգային հակատի օրգան «Ժողովուրդ» թերթը:

---

7 Տե՛ս «Ժողովուրդ» (Փարիզ), 14 մարտի, 1945։

Ֆրանսահայ ազգային նակատի ղեկավար գործիչներից են եղել Միսակ Մանուշյանը, Դավիթ Թավթյանը, Շահեն Տատուրյանը, Արփիար և Լուիզա Ասլանյանները, Սիրամ Բաղդասարյանը, Մելքոն Գեղունին, Հարություն Սարտիկյանը, Իսպանիայի 1937—1938 թթ. ազատագրության պայքարի մասնակից Ազատ (Վահեն) Ադամյանը և ուրիշներ:

Ֆրանսիայի Դիմադրական շարժման դյուցազնական պայքարում առանձին տեղ է գրավում ֆրանսահայ կոմունիստ, բանաստեղծ Միսակ Մանուշյանը: Նա Փարիզի ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատի հրամանատարն էր: Ջոկատում ֆրանսիացի զինակիցների հետ քշնամու դեմ կռվում էին հայերը՝ Արբեն Թավթյանը, Ալեքսանդր Կոստանդինյանը, Տիրան Ոսկեչյանը, Ենոքի Կարայանը, Աբսեն Զաքրյանը, իսպանացի Սելեստինո Ալֆոնսոն, հրեաներ Իոսիֆ Բոմարվը, Մարսել Ռեյմանը, Օլգա Բանչիկը, ավստրիացի Դուստավ Գուրգը, հունգարացի Էմրիկ Գլասը, ռումինացի Իոսիֆ Կլիչը, իտալացիներ Սպարտակո Ֆոնտանոն, Ամադեո Ուսելլոն, լեհ Ստանիսլավ Կուբացկին, ադրբեջանցի Ալեքսանդր Աբասովը և շատ ուրիշներ:

Մանուշյանի հրամանատարությամբ մարտնչող ջոկատի և նրա խմբերի գործողությունները Փարիզում և նրա շրջակայքում սարսափի մեջ էին պահում հիտլերյան օկուպացիոն իշխանություններին: Պաշտոնական տվյալներով պարտիզանները 62 անգամ հարձակումներ են կատարել հիտլերականների կայազորների վրա, պայթեցրել են 31 ռազմական արհեստանոց և ավտոմեքենաների պարկ, դարանամուտ նոնակային հարվածներ են հասցրել ռազմական բեռներ և էշելոնային գորքեր փոխադրող 36 ավտոմեքենաների և զրահատրանսպորտյորների, խորտակել են երկաթուղային 31 գնացք, 2 անգամ հարձակվել են օդանավակայանների վրա, 24 անգամ նոնակներ են նետել գորանոցների և պատրաստական կացարանների ներսը: Այս օպերացիաների ընթացքում գրաված են մեծ քանակությամբ տեխնիկա և կենդանի ուժ, ոչնչացվել են բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց մեջ նաև ֆրանսիական ժողովրդի դահիճներ. մեծ Փարիզի զինվորական պարետ, գեներալ ֆոն Շաումբուրգը և «ՍՍ» գնդերի գեներալ-լեյտենանտ Յուլիուս ֆոն Ռիտտերը[8]:

1943 թ. նոյեմբերի 16-ին դավանանքի մատնությամբ գեստապոն ձերբակալում է Մանուշյանին և նրա ջոկատի 22 ընկերներին ու նետում Փարիզի Ֆրեն բանտը: Ջոկատի անդամների մի մասին հաջողվում է խուսափել բանտարկությունից. Դիմադրության շարժման հրամանատարությունը նրանց տեղափոխում է տարբեր դեպարտամենտներ, որտեղ նրանք նորից շարունակում են գործել մինչև Ֆրանսիայի ազատագրումը:

Գեստապոն 3 ամիս անմարդկային խոշտանգումների է ենթարկում Մանուշյանին և մյուսներին: 1944 թ. փետրվարի 21-ին նրանց բոլորին գնդակահարում են Փարիզի մոտ գտնվող Մոն-Վալերիենում: Հիտլերյան ռազմական ատյանը «23»-ի դատավարության փաստաթղթերում Մանուշյանի անձնական հաշվում արձանագրել է 56 հարձակում, 150 սպանված, 600 վիրավոր[9]:

Մանուշյանը մարտնչող կոմունիստ էր: Ուղիական սիրով նա կապված էր Սովետական Հայաստանի հետ և կյանքի վերջին ժամերին անգամ նրա մասին էր մտածում: Գնդակահարվելուց առաջ, 1944 թ. փետրվարի 21-ին իր

---

8 Տե՛ս «Աշխար.» (Փարիզ), 3 փետրվարի 1968:

9 Նույն տեղում:

բարեկամներից մեկին ուղարկած նամակում նա գրել է. «... Շուտով, այս կեսօրից հետո ժամը 15-ին կգնդակահարվենք... Ես մտել էի ազատության բանակը որպես կամավոր զինվոր և մնոնում եմ երկու քայլ հեռու հաղթանակից. երջանկություն նրանց, ովքեր պիտի ապրեն մեղանից հետո և պիտի վայելեն վաղվա ազատության և խաղաղության բաղդությունը... Եթե հնարավոր է, իմ հիշատակները տար Հայաստան: Պլգեն փողոցի մեր տան նամպարկում ունեմ 15 հազար ֆրանկ, եթե կարող ես վերցնել, վճարիր իմ պարտքերը և մնացածը նվիրիր Հայաստանին...»[10]:

Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը, բանվոր դասակարգը և ժողովուրդը բատ արժանվույն գնահատեցին Դիմադրության պայքարի հերոսներին, ինչպես նաև Մանուշյանի ու նրա խմբի սխրագործությունները: 1944 թ. ֆրանսիական կառավարությունը Մանուշյանին հետմահու պարգևատրեց Պատվո Լեգեոնի շքանշանով, հայտարարեց Ֆրանսիայի ազգային հերոս: Արնովիլ-լե-Գոնես քաղաքի փողոցներից մեկը վերանվանվեց Մանուշյանի անունով: 1955 թ. «Մանուշյանի խումբ» անունով կոչվեց Փարիզի 20-րդ շրջանի փողոցներից մեկը: «Հայ ժողովուրդը իրավունք ունի պարծենալու Մանուշյանի խմբի հերոսներով,— ասել է Ֆրանսիայի կոմկուսի քարտուղար Ժակ Դյուկլոն,— որոնք շարունակելով նույն պայքարը, որ սովետական պանծալի բանակն ու ժողովուրդը մղում էին ֆաշիզմի դեմ, իրենց կյանքը տվեցին հանուն ժողովրդի ազատության: ... Մանուշյանի և նրա մարտական ընկերների հիշատակը ապրում է, և կապրի Ֆրանսիայի բանվոր դասակարգի սրտում, նրանց պանծալի սխրագործությունը չի մոռացվի, և մենք մեծ գրող Վիկտոր Հյուգոյի հետ միասին կարող ենք ասել՝ «Զոհվածները ողջերի պես մասնակցում են մեր մարտերին»[11]:

Մանուշյանի խմբից բացի, ֆրանսահայ ազգային նպատակի ակտիվ մարտնչողներից շատերն ընկան հերոսի մահով, զնդակահարվեցին, տանջամահ արվեցին ֆաշիստական զնդաններում և համակենտրոնացման ճամբարներում: Դրանցից են, օրինակ, Նշան Տեր-Մարտիրոսյանը, Հայկ Դպիրյանը, գրողներ Արփիար Ասլանյանը, Լուիզա Ասլանյանը (Լաս) և ուրիշներ:

1944 թ. հազարավոր ֆրանսահայեր մասնակցեցին ֆաշիստական օկուպանտների դեմ Մարսելում, Լիոնում և մյուս վայրերում բռնկված ապստամբություններին, դաշնակիցների և Դը Գոլի ֆրանսիական բանակների շարքերում հերոսաբար կռվեցին հանուն Փարիզի և Ֆրանսիայի ազատագրման:

Կարմիր բանակի հաղթական առաջրնթացը դեպի Արևմտյան Եվրոպայի երկրները գոտեպնդեց ու լայն ծավալ հաղորդեց Դիմադրության շարժմանը Ռումինիայում, Բուլղարիայում, Հարավսլավիայում, Հունաստանում, Իտալիայում և այլուր: Մասսայական պայքարի մեջ ընդգրկվեցին նաև այդ երկրների հայկական գաղթօջախների աշխատավորները: Միայն հունահայ գաղութից 300 հայորդիներ զոհվեցին պարտիզանական կռիվներում և ընդհատակյա պայքարում: Այդ զոհվածների մեջ էին Հունաստանի կոմունիստական շարժման վետերան, պրոֆեսիոնալ հեղափոխական Վահրամ Սահայանը, եղբայրներ Անդրանիկ և Երվանդ Ղուկասյանները, ակտիվ հասարակական գոր-

10 Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 4։
11 Տե՛ս Միսակ Մանուշյան, Իմ երգը, Երևան, 1956, էջ 3—5։

ծիշ Սիլվեստրո Ղալեյանը (Ղալեասը), Սարգիս Էմենջյանը, հետախույզ պարտիզան Սարգիս Բենլեյանը, Ավետիս Յափնջյանը և ուրիշներ: Կենդանի մնացած ակտիվ գործիչներից Սովետական Հայաստան ներգաղթեցին՝ Զ. Այվազյանը, Վ. Դաբեսյանը, Հ. Ղազարոսյանը և ուրիշ շատերը:

Դիմադրական շարժումը հենց սկզբից էլ ուժեղ էր Բուլղարիայում, որը ղեկավարում էին Բուլղարիայի՝ ընդհատակում գործող բանվորական կուսակցությունը և հայրենական ճակատը, որոնք կարմիր բանակի հետ միասին 1944 թ. սեպտեմբերի 9-ին ազատագրեցին Բուլղարիան և տապալեցին ֆաշիստական ռեժիմը: Այդ պայքարին ակտիվորեն մասնակցեց նաև բուլղարահայ գաղութը: Թանկ գնով նվաճվեց ազատությունը, հարյուրավոր հայ մարտիկներ ընկան հերոսի մահով: Ֆաշիստները Վառնայում գնդակահարեցին և ծովը նետեցին Կարապետ Խաչատրյանին, Հարություն Պողոսյանին, զազանարար սպանեցին բուլղարահայ անվանի հասարակական գործիչ Հակոբ Պարոնյանին և ուրիշ շատերի: Ամբողջ Բուլղարիայում բնդաց «Զավդար» պարտիզանական ջոկատի երիտասարդ պարտիզանուհի Հերմինե Ռազկրստյանի (Աշկայի) անունը, որին դահիճները 1941 թ. հունիսի 10-ին զազանարար սպանեցին: Բուլղարիայում լույս տեսնող «Երևան» հայերեն թերթը նրա մասին գրեց. «Անմահացած Աշկան դրոշ է հակաֆաշիստական երիտասարդության համար»:

Դիմադրության պայքարի ակտիվ մասնակիցներ եղան շատ հայեր Բելգիայում, Հոլանդիայում, Չեխոսլովակիայում, Իտալիայում, Լեհաստանում և այլուր:

Այսպիսով, սիյոնահայ աշխատավորությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին համախմբվելով առաջադիմական կազմակերպությունների շարքերում, նյութական և բարոյական օգնություն ցույց տվեց կարմիր բանակին, Սովետական Հայաստանին: Նրա հազարավոր զավակներ զենքը ձեռքներին կռվեցին ֆաշիզմի և նրա գործակալների դեմ, գործնականում ապացուցելով, որ իրենք ամբողջովին կանգնած են սովետական հայրենիքի, սիրելի Հայաստանի պաշտպանության դիրքերում: